

5.13. Ազրոտերևութաբակական տեղեկատվություն (2001թ. սեպտեմբեր-դեկտեմբեր և 2002թ. հունվար-ապրիլ)

2001թ. աշնանային անբավարար տեղումների հետևանքով (տեղումների միջին հանրապետական քանակը կազմել է նորմայի 66.8%-ը) հանրապետության մարզերի մեծ մասում աշնանացան մշակաբույսերի ցանքը կատարվել է չոր հողում և ուշացումով: Այդ պատճառով աշնանացանը մինչև վեգետացիայի դադարը չհասցրեց թփակալել՝ անցան ձմեռման թերզարգացած վիճակում: Սակայն 2001թ. դեկտեմբերի ամսական տեղումների քանակը գերազանցել է նորման 40% - ով, իսկ 2002թ. հունվար և փետրվար ամիսներին այն համապատասխանաբար կազմել նորմայի 79 և 96 %-ը:

2002թ. հունվար-փետրվարի օդի ցածր ջերմաստիճանը աշնանացանի թփակալման հանգույցում հողի ջերմաստիճանը հասցրեց ռիսկային սահմանագծի՝ $-11,,-13^{\circ}$, որը վտանգավոր էր թերզարգացած աշնանացանի համար: Փետրվարի 20-ի դրությամբ աշնանացանի թփակալման հանգույցում ամենացածր ջերմաստիճանը արձանագրվել է $-9,,-11^{\circ}$:

2002թ. գարունը բնութագրվեց վաղաժամկետությամբ: Աշնանացանի վեգետացիայի վերսկսման պահին հանրապետությունում հողի արդյունավետ խոնավության գարնանային պաշարները բավարար էին: Սակայն մարտ ամսին օդի միջին հանրապետական ջերմաստիճանը 3-4 աստիճանով բարձր էր նորմայից:

Հանրապետության որոշ տարածքներում (Արարատյան հարթավայր, դրա նախալեռները, Վայոց ձոր) 9-13 օր շուտ դիտվեց պտղատու ծառերի ուռչումը, երկրորդ տասնօրյակի վերջում սկսեց նաև ծիրանիների ծաղկումը: Սակայն մարտ ամսում տեղի ունեցավ նաև ցրտահարություն ($-4,,-8^{\circ}$), որն իր բացասական ազդեցությունը թողեց բազմամյա տնկարկների վրա: Մարտ և ապրիլ ամիսներին դիտված հաճախակի տեղումները պտղատուների փոշոտման շրջանում (մարտին 21 օր , ապրիլին 27 օր) խանգարեցին փոշոտմանը: Ընդ որում, ապրիլ ամսվա միջին ջերմաստիճանը 1- 3° ցածր էր նորմայից: Արարատյան հովտում և Տավուշում պտղատուներին նշանակալի վնաս հասցրեցին ապրիլի երկրորդ տասնօրյակում դիտված ցրտահարությունը ($-1...-5^{\circ}$) և տեղացած կարկուտը:

Տևական տեղումները բացասաբար ազդեցին նաև գարնանացանի ընթացքի վրա, ի մասնավորի՝ 2002թ. մայիսի 1-ի դրությամբ հանրապետությունում կատարվել է 33.8 հազ. հեկտար գարնանացան մշակաբույսերի ցանք 2001թ. նույն ժամանակաշրջանի 81.7 հազ. հեկտարի դիմաց: